

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու վերաբերյալ

Հայաստանում փոքր և միջին ձեռնարկատիրության (ՓՄՁ) սուբյեկտների դասակարգման չափորոշիչների հստակեցման, միասնականացման և դրանք Եվրամիության չափանիշներին մոտեցման նպատակով, անհրաժեշտություն է առաջացել փոփոխություն կատարելու «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքում, որն ուղղված կլինի առաջին հերթին Հայաստանում ՓՄՁ պետական աջակցության առավել նպատակային իրականացմանը, ինչպես նաև ՓՄՁ ոլորտին առնչվող վիճակագրության վարման գործընթացների պարզեցմանն ու կատարելագործմանը: Հայաստանում ՓՄՁ սուբյեկտների դասակարգման չափորոշիչներն ամրագրված են 2000թ. ընդունված «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքով: Նման չափորոշիչների կիրառումը բխել է այն ժամանակ ՀՀ տնտեսության տարբեր ճյուղերի և բնագավառների զարգացման մակարդակից և ընդհանուր առմամբ երկրում ձևավորված տնտեսական իրավիճակից:

Եվրոպական երկրներում ՓՄՁ սուբյեկտների դասակարգման չափորոշիչները ենթարկվում են դինամիկ փոփոխության՝ մոտենալով Եվրամիության չափանիշներին, ինչն ակնհայտորեն նպաստում է այդ երկրներում ՓՄՁ ոլորտի զարգացմանն ուղղված պետական աջակցության ծրագրերի (միջոցառումների) նպատակայնության, հետևողականության և արդյունավետության ապահովմանը:

Եվրամիության չափորոշիչների համաձայն ՓՄՁ սուբյեկտները դասակարգվում են երեք խմբի՝

- միկրո (գերփոքր),
- փոքր,
- միջին:

Դասակարգումը կատարվում է հիմք ընդունելով նրանցում ներգրավված աշխատողների թվաքանակը, միջին տարեկան ապրանքաշրջանառության ծավալը և միջին տարեկան հաշվեկշռի գումարը: Եվրամիության չափորոշիչներ կիրառող երկրներում միկրո տնտեսավարող սուբյեկտներ են համարվում մինչև 10 աշխատող ունեցող կազմակերպությունները, որոնց միջին տարեկան ապրանքաշրջանառության ծավալը, ինչպես նաև միջին տարեկան հաշվեկշռի գումարը չեն գերազանցում 2 մլն եվրոն, փոքր տնտեսավարող սուբյեկտներ են համարվում մինչև 50 աշխատող ունեցող կազմակերպությունները, որոնց միջին տարեկան ապրանքաշրջանառության ծավալը, ինչպես նաև միջին տարեկան հաշվեկշռի գումարը չեն գերազանցում 10 մլն եվրոն, իսկ միջին տնտեսավարող սուբյեկտներ՝ մինչև 250 աշխատող ունեցող կազմակերպությունները, որոնց միջին տարեկան ապրանքաշրջանառության ծավալը չի գերազանցում 50 մլն եվրոն, իսկ միջին տարեկան հաշվեկշռի գումարը՝ 43 մլն եվրոն:

Հարկ է նշել, որ Եվրամիության չափորոշիչներ կիրառող գրեթե բոլոր երկրները հնարավորություն ունեն իրականացնելու համեմատական վիճակագրական վերլուծություն, ինչն ակնհայտորեն ստեղծում է տարբեր երկրներում ՓՄՁ ոլորտի զարգացման մակարդակի վերաբերյալ առավել հստակ պատկեր՝ երկրի տնտեսության մեջ ՓՄՁ ոլորտի տեղի ու դերի գնահատման առումով:

Հայաստանի Հանրապետությունն այսօր կանգնած է Եվրամիության հետ համագործակցության մեխանիզմների մշակման, համաշխարհային տնտեսությանը ինտեգրվելու անհրաժեշտության խնդրի առջև: Որպես Հայաստանի Հանրապետության կողմից շուկայական ազատական տնտեսության և եվրոպական քաղաքական կամքի բնորոշում և իրավական հիմք՝ 1996թ. Եվրամիության և Հայաստանի Հանրապետության միջև ստորագրվեց «Գործընկերության և համագործակցության համաձայնագիր» (ԳՀՀ), որն ուժի մեջ մտավ 1999թ. հուլիս ամսից: ԳՀՀ-ի հիմնական նպատակներից մեկը օրենսդրական և տնտեսական համագործակցության հաստատումն է:

Հայտնի է, որ Եվրոպական տնտեսական ինտեգրացման հիմնական նախապայմաններից մեկը հավակնող երկրների օրենսդրությունների համապատասխանեցումն է Եվրամիության օրենսդրությանը: Այս առումով հատկապես կարևորվում է Հայաստանի տնտեսության զարգացման համար առանցքային նշանակություն ունեցող ՓՄՁ ոլորտը կարգավորող օրենսդրության, մասնավորապես՝ ՓՄՁ սուբյեկտների դասակարգման չափորոշիչների համապատասխանեցումը Եվրամիության կողմից ամրագրված դրույթներին:

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունը գտնվում է սոցիալ-տնտեսական զարգացման որակապես նոր փուլում, առկա են երկրի տնտեսական զարգացման կայուն միտումներ: Նշված միտումները պայմանավորված են ինչպես մասնավոր հատվածի զարգացմանն ուղղված համալիր միջոցառումների, այնպես էլ ձեռնարկատիրական գործունեության համար անհրաժեշտ օրենսդրական դաշտի և համապատասխան միջավայրի ձևավորմամբ, մասնավորապես՝ «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ և դրանից բխող ՓՄՁ ոլորտի զարգացմանն ուղղված պետական ծրագրերի հետևողական իրականացմամբ:

Վերը նշված գործոններով պայմանավորված՝ վերջին տարիներին Հայաստանում ինտենսիվորեն զարգանում են արդյունաբերության, տեղեկատվական տեխնոլոգիաների, շինարարության և տրանսպորտի (բեռնավոխադրումների) ոլորտները: Բնակչության վճարունակության բարձրացման և Հայաստան այցելող զբոսաշրջիկների թվաքանակի ավելացմամբ պայմանավորված՝ Հայաստանի Հանրապետությունում արագ տեմպերով զարգանում են նաև առևտրի և ծառայությունների բնագավառները, ստեղծվում են մեծ թվով առևտրի և հանրային սննդի օբյեկտներ, բնակչությանն ու զբոսաշրջիկներին տարատեսակ ծառայություններ մատուցող կազմակերպություններ:

Թվարկված բնագավառներում գործող կազմակերպությունների ավելի քան 95 տոկոսը դասվում են ՓՄՁ ոլորտին, որը հանդիսանում է երկրի տնտեսության դինամիկ զարգացող ոլորտներից մեկը: Հարկ է նշել, որ միայն 2007թ. ստեղծվել են շուրջ 16 հազար ՓՄՁ սուբյեկտներ, իսկ վերջին 3 տարիների ընթացքում՝ շուրջ 36 հազար ՓՄՁ սուբյեկտներ, դրա հետ մեկտեղ ավելացել է ՓՄՁ ոլորտի մասնակցությունը երկրի համախառն ներքին արդյունքում (ՀՆԱ), որը 2007թ. տվյալներով կազմել է 41%՝ 2.4 անգամ գերազանցելով 1999թ. մակարդակը (17%):

Տնտեսական զարգացման գործընթացներին համապատասխան լուրջ փոփոխություններ են կատարվել նաև ՓՄՁ ոլորտի կառուցվածքում, առկա է ՓՄՁ սուբյեկտներում զբաղված աշխատողների միջին թվաքանակի ավելացում, հատկապես՝ տրանսպորտի, շինարարության, առևտրի և ծառայությունների ոլորտում, ինչն անհրաժեշտություն է առաջացրել վերանայել ՓՄՁ սուբյեկտների դասակարգման չափորոշիչները: Այսպես, փոքր և միջին տնտեսավարող սուբյեկտների պարագայում նախատեսվում է միասնականացնել տնտեսական գործունեության ոլորտները՝ հնարավորինս մոտեցնելով Եվրամիության չափորոշիչներին և միաժամանակ համապատասխանեցնելով երկրի տնտեսական զարգացման ներկայիս պահանջներին:

Առաջարկվող փոփոխությունները հիմնված են մի շարք գործոնների՝ մասնավորապես.

- ՓՄՁ զարգացման միջազգային փորձի վրա,
- ՓՄՁ սուբյեկտների դասակարգման Եվրամիության չափորոշիչների վրա,
- Հայաստանում ՓՄՁ պետական աջակցության տարեկան ծրագրերի իրականացման ուղղությամբ կուտակված փորձի վրա,
- միջազգային և օտարերկրյա դոնոր կազմակերպությունների կողմից Հայաստանում ՓՄՁ ոլորտի զարգացմանն ուղղված ծրագրերի (միջոցառումների) իրականացման սկզբունքների վրա,
- Հայաստանում ՓՄՁ սուբյեկտների դասակարգման չափորոշիչների վերաբերյալ ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի փորձագետների կողմից արված առաջարկությունների վրա,
- ինչպես նաև վերջին տարիներին տնտեսավարող սուբյեկտների միջին տարեկան ապրանքաշրջանառության ծավալների և միջին տարեկան հաշվեկշռի գումարների վերաբերյալ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված տվյալների վերլուծության արդյունքների վրա.

Աշխատողների թվաքանակ	Միջին տարեկան ապրանքաշրջանառության ծավալ (մլն դրամ)			Միջին տարեկան հաշվեկշռի գումար (մլն դրամ)		
	2005թ.	2006թ.	2007թ.	2005թ.	2006թ.	2007թ.
0-ից 9	17.9	22.4	24.3	11.4	15.7	15.0
10-ից 49	60.3	74.5	92.2	80.5	87.5	81.0
50-ից 100	134.5	147.1	185.2	123.1	171.5	183.6
101-ից 150	212.1	286.1	365.1	250.1	435.6	423.7
151-ից 200	316.4	628.5	716.1	659.0	713.5	724.1

Հայաստանում ՓՄՁ սուբյեկտների ապրանքաշրջանառության ծավալների և ակտիվների չափորոշիչների հաշվարկման և հիմնավորման նպատակով կիրառվել է պրոգրեսիվ-անալիտիկ արտարկման մեթոդը՝ ստանալով մինչև 2015թ. ՓՄՁ սուբյեկտներում ըստ տնտեսական զարգացման միտումների սպասվող միջին տարեկան ապրանքաշրջանառության ծավալները և միջին տարեկան հաշվեկշռի գումարները:

Աշխատողների թվաքանակ	Միջին տարեկան ապրանքաշրջանառության ծավալ (մլն դրամ)				Միջին տարեկան հաշվեկշռի գումար (մլն դրամ)			
	2005թ.	2007թ.	2011թ.	2015թ.	2005թ.	2007թ.	2011թ.	2015թ.
0-ից 9	17.9	24.3	44.8	82.5	11.4	15.0	26.0	44.9611
10-ից 49	60.3	92.2	215.6	503.9	80.5	81.0	82.0	83.0312
50-ից 100	134.5	185.2	351.1	665.8	123.1	183.6	408.4	908.513
101-ից 150	212.1	365.1	1081.8	3205.5	250.1	423.7	1216.0	3490.1
151-ից 200	316.4	716.1	3668.2	18789.8	659.0	724.1	874.2	1055.48

Հաշվի է առնվել նաև այն հանգամանքը, որ Հայաստանում վերջին տասնամյակում առկա է կայուն երկնիշ տնտեսական աճ, ինչպես նաև այն, որ հարկային դաշտի բարեփոխումների արդյունքում տարեցտարի պակասում է ստվերային ապրանքաշրջանառությունը, թաքցված աշխատատեղերի քանակը, ինչի արդյունքում տեսանելի է դառնում տնտեսավարող սուբյեկտների տնտեսական ցուցանիշների, մասնավորապես՝ ապրանքաշրջանառության ծավալների և հաշվեկշռի գումարների վերաբերյալ տեղեկատվության իրական պատկերը:

Այսպիսով, առաջարկվող փոփոխություններն ուղղված են առաջին հերթին Հայաստանում ՓՄՁ պետական աջակցության առավել նպատակային իրականացմանը, ինչպես նաև ՓՄՁ ոլորտին առնչվող վիճակագրության վարման գործընթացների պարզեցմանն ու կատարելագործմանը՝ հաշվի առնելով և հիմնվելով ոչ միայն աշխատողների թվաքանակի, այլ նաև ապրանքաշրջանառության և ակտիվների ցուցանիշների վրա: Սա ենթադրում է կատարել համապատասխան փոփոխություններ «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքում՝ գերփոքր, փոքր և միջին տնտեսավարող սուբյեկտների համար աշխատողների թվաքանակը սահմանելով համապատասխանաբար մինչև 10 մարդ, մինչև 50 մարդ և մինչև 250 մարդ՝ վերջիններիս չտարանջատելով ըստ տնտեսական գործունեության ոլորտների:

Առաջարկվում է որպես դասակարգման չափանիշ կիրառել նաև տնտեսավարող սուբյեկտների միջին տարեկան ապրանքաշրջանառության ծավալը՝ գերփոքր տնտեսավարող սուբյեկտների համար սահմանելով մինչև 100 մլն դրամ, փոքր տնտեսավարող սուբյեկտների համար՝ 500 մլն դրամ և միջին տնտեսավարող սուբյեկտների համար՝ 1500 մլն դրամ, ինչպես նաև տնտեսավարող սուբյեկտների միջին տարեկան հաշվեկշռի գումարը՝ սահմանելով այն համապատասխանաբար մինչև 100 մլն դրամ, մինչև 500 մլն դրամ և մինչև 1000 մլն դրամ:

Տնտեսավարող սուբյեկտներ	Աշխատողների թվաքանակ (մարդ)	Միջին տարեկան ապրանքաշրջանառության ծավալ (մլն դրամ)	Միջին տարեկան հաշվեկշռի գումար (մլն դրամ)
Գերփոքր	մինչև 10	մինչև 100	մինչև 100
Փոքր	մինչև 50	մինչև 500	մինչև 500
Միջին	մինչև 250	մինչև 1500	մինչև 1000

Առաջարկվող փոփոխությունը կնպաստի Հայաստանում ՓՄՁ սուբյեկտների դասակարգման չափորոշիչների հստակեցմանն ու միասնականացմանը և հնարավորություն կտա դրանք մոտեցնել Եվրամիության չափանիշներին, ինչն ակնհայտորեն կնպաստի ՓՄՁ ոլորտի աջակցությանն ուղղված ծրագրերի (միջոցառումների) հետևողականության, թափանցիկության և հասցեականության ապահովմանը:

Բացի այդ, «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքում ՓՄՁ սուբյեկտների դասակարգման չափորոշիչների վերոնշյալ փոփոխությունը հնարավորություն կտա Եվրամիության շրջանակներում իրականացվող ՓՄՁ աջակցության ծրագրային նախաձեռնությունները հասանելի դարձնել նաև Հայաստանում գործող ՓՄՁ սուբյեկտների համար: